Հայտարարություն

ՀՀ **Արագածոտնի** մարզի **«Արտենիի թիվ 1 միջնակարգ** դպրոց» ՊՈԱԿ-ի **տնօրենությունը հայտարարում է մրցույթ՝** ՆԶՊ զինղեկ /1 դրույք/ , ՔՊ /0,35 դրույք /, ֆիզիկա /8 դասաժամ/ **առարկաների** ուսուցիչների թափուր աշխատատեղերի համար: **Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:**

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը **և** յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26- րդ հոդվածի 1-ին մասին համապա-տասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից **և** աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
5. Ինքնակենսագրություն (Ձեւ 5),
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
10. **Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն/մասնակցած լինելու դեպքում/:**
11. **Հանրակրթության մասին** ե **ՀՀ օրենքի** 26-**րդ հոդվածի** 2-**րդ մասի** 3-**րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից**:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ **և** բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել **և** համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում **են** 2026**թվականի հունվարի 15 -ից մինչև հունվարի 30**-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00- ից 15:00-ը, **բացի** շաբաթ, կիրակի **և** ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **փետրվարի** 4-**ին՝** ժամը 13:00-ին, **ՀՀ Արագածոտնի մարզի «Արտենիի թիվ 1 միջնակարգ** դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ **գ. Արտենի ,Մուրացան** 2:

Տեղեկությունների համար զանգահարել /093814870, 043814870/ հեռախոսահամարներով: